Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու

առաջարկությունների վերաբերյալ

13.01.2014թ. դրությամբ

1. Ստացվել են նամակներ ընդամենը՝ **5274**

որից՝

	ԹՎԱՔԱՆԱԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	473	8.9
դիմում	4334	82.1
բողոք	467	8.6
կրկնակի	471	8.9
կոլեկտիվ	37	0.7

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ **825**

	ԹՎԱՔԱՆԱԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	680	82.4
բողոք	145	17.5

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԱԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	32	0.6
կոմունալ-կենցաղային	9	0.1
շինարարական	2	0.03
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	4	0.07
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	51	0.9
առողջապահության	39	0.7
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	2549	48.3
օրենսդրական	101	1.9
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	128	2.4
ապարատային		
այլ հարցեր	2354	44.6
սեփականաշնորհում	5	0.09

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2013Թ. ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 5274 նամակներից մոտ 8.9%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 8.6%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 82.1%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 48.3%-ն առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 2.4%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում, ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները տարանջատվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումների (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումների:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 0.6%-ը առնչվում է բնակարանային, 0.1%-ը կոմունալ-կենցաղային, 0.03%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 44.6%-ը դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրների, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնում ենք, որ ստացված դիմումներից 4958-ին տրվել է գրավոր, իսկ 213-ին՝ բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 103-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն